ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի „Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ„ հ. 270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոց 1-ին նրբանցքի հ. 2 շենքի թիվ 27 50.2քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 18.05.2015թ. հ. 18052015-01-0107 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/՝ Քերոբ Սերոբի Քոլիկյանին և Ֆլորա Քերոբի Քոլիկյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքի հ.2 շենքի հ. 27՝ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 18.05.2015թ. հ.18052015-01-0107 վկայական) 50.2քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարել Քերոբ և Ֆլորա Քոլիկյաններին:

Համաձայն ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի կողմից 01.09.2015թ. տրամադրված հ.34/ա-1612 տեղեկատվության՝ Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքի հ.2 շենքի հ.27 բնակարանում հաշվառված են Քերոբ և Ֆլորա Քոլիկյանները, սակայն նրանց հետ հաշվառված են եղել Հռիփսիմե, Նինել և Վեռոնիկա Քոլիկյանները, որոնք մահվան կապակցությամբ օրենքով սահմանված կարգով դուրս են եկել հաշվառումից (մահվան 06.07.2005թ. հ.095568, 14.02.2015թ. հ.210443 և 01.07.2014թ. հ.4991 վկայականներ), իսկ Մերուժան Քոլիկյանը, որը հանդիսանում է Քերոբ Քոլիկյանի որդին օրենքով սահմանված կարգով հրաժարվել է մասնակցել բնակարանի մասնավորեցման գործընթացին (հիմք՝ նոտարի կողմից հաստատված 11.09.2015թ. հ.2281 համաձայնագիր): Նախկինում Հռիփսիմե Քոլիկյանը հանդիսացել է քննարկվող բնակարանի վարձակալ: Նա ամուսնացած չի եղել, ժառանգներ չի ունեցել և փաստացի՝ մինչև մահը բնակվել է իր եղբոր որդի Քերոբ Քոլիկյանի հետ համատեղ: Նրա մահից հետո ժառանգություն չի ձևակերպվել:

Համաձայն Աջափնյակ վարչական շրջանի «Արմինե» համատիրության կողմից 12.06.2015թ. հաստատված հարևանների հայտարարության՝ քաղաքացի Քերոբ Քոլիկյանը 1979 թվականից մշտական հաշվառված է և բնակվում է նշված բնակարանում: Այնտեղ ծնվել են նաև նրա երեխաները և մինչև օրս քաղաքացին վճարում է բնակարանի հետ կապված բոլոր կոմունալ և սպասարկման համար անհրաժեշտ վճարումները:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագիր/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ